ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/05/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 ապրիլի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի և Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի ապրիլի 06-ին, քննելով ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանի կողմից 2021 թվականի ապրիլի 12-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ նաև 2020 թվականի տարեկան հայտարարագիր) հայտարարագրման ենթակա տվյալներ չներկայացնելու, ինչպես նաև լրացման կարգի խախտման փաստերի առթիվ 2022 թվականի փետրվարի 22-ին հարուցված ՎԻՎ/05/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, թիվ 62217021 քրեական գործով 15.09.2021թ. ընդունված որոշման կապակցությամբ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայությունից 16.09.2021թ. ստացված թիվ 18-379կգ-21 գրության հիման վրա, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, պարզել է, որ Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանը.

1) 2020 թվականի տարեկան հայտարարագրի Գ.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ

հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում հայտարարագրել է Արսեն Մանվելի Ղարիբյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 700,000 ՀՀ դրամի չափով և Արտակ Հայկասարի Աղվանյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 500,000 ՀՀ դրամի չափով: Նույն հայտարարագրի Գ.2. «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում Արսեն Տիտանյանի կողմից նշվել է. «Սեփական եկամուտների մեջ հիմնական մաս են կազմում նաև գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված եկամտի արժեքը, որը կազմել է մոտավորապես 2,500,000 դրամ և անասնապահական մթերքներից ստացված եկամուտը 4,600,000 դրամ»:

Արսեն Տիտանյանը ստացել է 7,100,000 ՀՀ դրամ բնամթերային տեսքով ստացված եկամուտ, որից 1,200,000 ՀՀ դրամն է հայտարարագրվել եկամուտների հայտարարագրման համար սահմանված բաժնում:

2) 2020 թվականի տարեկան հայտարարագրի Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրել իր անդամակցությունը «Կնդարար» սպառողական կոոպերատիվին, որը, ըստ «Կնդարար» սպառողական կոոպերատիվի կանոնադրության, հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն:

3) Արսեն Տիտանյանի կողմից 2020 թվականի պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրվել կնոջ՝ Հայկուշ Պետրոսյանի մասնակցությունը «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ում:

1.2 2021 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ Ե-04/892-2021 գրությամբ Հանձնաժողովը ՀՀ հատուկ քննչական ծառայությունից խնդրել է տրամադրել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խախտումը հիմնավորող նյութերի պատճենները, մասնավորապես, «Կնդարար» սպառողական կոոպերատիվի և «ԱՄԱՏԻՏ» ՍՊ ընկերության գործունեության վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեից ստացված նյութերը:

1.3 Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 18-370կգ-21 գրությամբ Հանձնաժողովին ներկայացվել են թիվ 62217021 քրեական գործում գտնվող՝ «ԱՄԱՏԻՏ» ՍՊ ընկերության վերաբերյալ էլեկտրոնային քաղվածքի, «Կնդարար» սպառողական կոոպերատիվի կանոնադրության, Պետական եկամուտների կոմիտեից ստացված թիվ 170-16/50295-2021 գրության պատճենները:

1.4 Հանձնաժողովի՝ 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 01/212/4-2022 գրությամբ Արսեն Տիտանյանը 2022 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 12:30-ին հրավիրվել է մասնակցելու նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.5 2022 թվականի փետրվարի 22-ին Արսեն Տիտանյանի մասնակցությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/05/22 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված իրավախախտումների հատկանիշներով:

1.6 Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 22-ի թիվ ՎԻՎ/05/22 որոշմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը՝ վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին նշումով, համապատասխան ուղեկցող գրությամբ փոստային առաքման միջոցով ներկայացվել է Արսեն Տիտանյանին:

1.7 2022 թվականի մարտի 14-ին Արսեն Տիտանյանի կողմից միջնորդություն է ներկայացվել մարտի 15-ին ժամը 11:00-ին նշանակված գործի քննությունը հարգելի պատճառով հետաձգելու և այլ օր նշանակելու վերաբերյալ:

1.8 Արսեն Տիտանյանի միջնորդությունն ընդունվել է և Հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 21-ի թիվ 01/548-2022 ծանուցման համաձայն Արսեն Տիտանյանը 2022 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 15:00-ին հրավիրվել է մասնակցելու թիվ ՎԻՎ/05/22 գործի քննությանը:

1.9 2022 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 15:00-ին Արսեն Տիտանյանի մասնակցությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

2.1 Արսեն Տիտանյանը Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ ներկայացրել է գրավոր բացատրություն, որի համաձայն զբաղվում է անասնապահական և դաշտավարության ոլորտով և իր կարծիքով, քանի որ նշված ոլորտները չեն հարկվում, ինքը չունի հաշվապահություն և հայտարարագրում նշել է ինչ հիշել է, իսկ մնացած բնամթերքով կամ փոխանակումով արված մթերքների եկամուտները չի կարող հիշել: Ինքը գումարի չափը նշել է իր վարկային պարտավորությունները վճարելով: Իսկ «Կնդարար» կոոպերատիվի հետ կապված՝ այն ստեղծման օրվանից չի աշխատել և որևէ դրամական շարժ չի ունեցել, ուստի մտածել է, որ անհրաժեշտ չի հայտարարագրում նշել:

2.2 Գործի քննության ընթացքում Արսեն Տիտանյանը հաստատել է իր գրավոր բացատրությամբ նշվածը՝ ավելացնելով, որ կատարված խախտումները չիմանալու արդյունքում են եղել և որևէ դիտավորություն չի եղել իր կողմից: Քանի որ «Կնդարար» կոոպերատիվի և «ԱՄԱՏԻՏ» ՍՊ ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է եղել, մտածել է, որ անհարժեշտություն չկա հայտարարագրում լրացնելու չգործող կազմակերությունների վերաբերյալ տվյալներ:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

3.1 Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/05/22 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանը.

1) 2021 թվականի ապրիլի 12-ին ներկայացրած 2020 թվականի տարեկան հայտարարագրի Գ.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում հայտարարագրել է Արսեն Մանվելի Ղարիբյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 700,000 ՀՀ դրամի չափով և Արտակ Հայկասարի Աղվանյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 500,000 ՀՀ դրամի չափով: Նույն հայտարարագրի Գ.2. «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում Արսեն Տիտանյանի կողմից նշվել է. «Սեփական եկամուտների մեջ հիմնական մաս են կազմում նաև գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված եկամտի արժեքը, որը կազմել է մոտավորապես 2,500,000 դրամ և անասնապահական մթերքներից ստացված եկամուտը 4,600,000 դրամ»:

Արսեն Տիտանյանը ստացել է 7,100,000 ՀՀ դրամ բնամթերային տեսքով ստացված եկամուտ, որից 1,200,000 ՀՀ դրամն է հայտարարագրվել եկամուտների հայտարարագրման համար սահմանված բաժնում:

2) 2020 թվականի տարեկան հայտարարագրի Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրել իր անդամակցությունը «Կնդարար» սպառողական կոոպերատիվին, որը, ըստ «Կնդարար» սպառողական կոոպերատիվի կանոնադրության, հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն:

3) Արսեն Տիտանյանի կողմից 2020 թվականի պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրվել իր կնոջ՝ Հայկուշ Պետրոսյանի մասնակցությունը «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ում:

3.2 Պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի օգոստոսի 13-ին ստացված թիվ 170-16/50295-2021 գրության համաձայն՝ «ԱՄԱՏԻՏ» ՍՊ ընկերությունը 2017 թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացրել է դիմում գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ և 2017 թվականի հոկտեմբերի 11-ից ունի «ժամանակավոր դադարեցված» կարգավիճակ, իսկ «Կնդարար» սպառողական կոոպերատիվը որպես տնտեսվարող սուբյեկտ գրանցվել է 2013 թվականի սեպտեմբերի 28-ին, 2015 թվականի սեպտեմբերի 25-ից ունի «գործունեությունը ժամանակավոր դադարեցված» կարգավիճակ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի 18-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ (...) գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը:

4.3 Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.4 Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են ոչ առևտրային կազմակերպության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.5 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի «Հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 04-Ն որոշման Հավելված 2-ի 35-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տվյալ լրացվում է այդ տվյալին վերաբերելի դաշտում, իսկ հավելյալ տեղեկատվության առկայության պարագայում այն ներառվում է եկամուտների հայտարարագրի վերջում առկա «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը առաջացնում է նախազգուշացում:

4.8 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.14 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.15 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է հայտարարագրման ենթակա եկամուտների ցանկը, որտեղ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը ուղղակիորեն նշված է որպես հայտարարագրման ենթակա եկամուտ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ ***հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք:***

Սույն գործով Արսեն Տիտանյանը 2020 թվականի տարեկան հայտարարագրի Գ.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում հայտարարագրել է Արսեն Մանվելի Ղարիբյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 700,000 ՀՀ դրամի չափով և Արտակ Հայկասարի Աղվանյանից բնամթերային ձևով ստացված եկամուտ՝ 500,000 ՀՀ դրամի չափով: Նույն հայտարարագրի Գ.2. «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում Արսեն Տիտանյանի կողմից նշվել է. «Սեփական եկամուտների մեջ հիմնական մաս են կազմում նաև գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված

եկամտի արժեքը, որը կազմել է մոտավորապես 2,500,000 դրամ և անասնապահական մթերքներից ստացված եկամուտը 4,600,000 դրամ»: Տվյալ դեպքում գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտները հայտարարագրվել են լրացման համար ոչ համապատասխան՝ «Լրացուցիչ տեղեկություններ» բաժնում դաշտում: Մինչդեռ, գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված և անասնապահական մթերքներից ստացված եկամուտները անհրաժեշտ էր հայտարարագրել «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում՝ որպես գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտ:

Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում հայտարարատուն թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով հաստատվել է, որ 1) 2020 թվականի տարեկան հայտարարագրի Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրել իր անդամակցությունը «Կնդարար» սպառողական կոոպերատիվին, որը, ըստ «Կնդարար» սպառողական կոոպերատիվի կանոնադրության, հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, **2**) Արսեն Տիտանյանի կողմից 2020 թվականի պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրվել իր կնոջ՝ Հայկուշ Պետրոսյանի մասնակցությունը «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ում:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Արսեն Տիտանյանը անզգուշությամբ 2020 թվականի տարեկան հայտարարագրում ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ և թույլ է տրվել ***Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:***

Ա. Տիտանյանն ինչպես իր գրավոր բացատրությամբ, այնպես էլ գործի քննության ընթացքում հայտնած դիրքորոշմամբ հայտնել է, որ վերոնշված տվյալները հայտարարագրում չներառելու պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ նշված երկու կազմակերպությունների գործունեությունը ժամանակավոր դադարեցված է, իսկ «Կնդարար» կոոպերատիվի հետ կապված՝ այն ստեղծման օրվանից չի աշխատել և որևէ դրամական շարժ չի ունեցել, ուստի մտածել է, որ անհրաժեշտ չի հայտարարագրում նշել:

Նշված փաստերը հաստատվել են նաև Պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 170-16/50295-2021 գրությամբ, որի համաձայն «ԱՄԱՏԻՏ» ՍՊ ընկերությունը 2017 թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացրել է դիմում գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու վերաբերյալ և 2017 թվականի

հոկտեմբերի 11-ից ունի «ժամանակավոր դադարեցված» կարգավիճակ, իսկ «Կնդարար» սպառողական կոոպերատիվը որպես տնտեսվարող սուբյեկտ գրանցվել է 2013 թվականի սեպտեմբերի 28-ին, 2015 թվականի սեպտեմբերի 25-ից ունի «գործունեությունը ժամանակավոր դադարեցված» կարգավիճակ:

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ նշանակությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Արսեն Տիտանյանի կողմից սույն գործով 2020 թվականի տարեկան հայտարարագրի Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրվել իր անդամակցությունը «Կնդարար» սպառողական կոոպերատիվին, ինչպես նաև Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրվել իր կնոջ՝ Հայկուշ Պետրոսյանի մասնակցությունը «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ում՝ թույլ տալով հայտարարագրում ***ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:***

Միաժամանակ, գործում առկա փաստերի համաձայն (Պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 170-16/50295-2021 գրություն) հաստատվել է, որ «Կնդարար» սպառողական կոոպերատիվի և «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ գործունեությունը

ժամանակավոր դադարեցված է, որպիսի հանգամանքով պայմանավորված Արսեն Տիտանյանը չիմացության պատճառով չի հայտարարագրել իր անդամակցությունը «Կնդարար» սպառողական կոոպերատիվին և կնոջ՝ Հայկուշ Պետրոսյանի մասնակցությունը «ԱՄԱՏԻՏ» ՍՊԸ-ում:

Նշված կազմակերպությունների գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով, 282-րդ և 283-րդ հոդվածներով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտման մասով Արսեն Ժորայի Տիտանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նախազգուշացում:

2. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու մասով կիրառել Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասը, Արսեն Տիտանյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով գործի վարույթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Տիտանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արսեն Տիտանյանին տրամադրել 3 օր՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**